

Ա. ՅԱԿՈԲԻ ՆԵՐԱԿԻ

ԳԵՐ. Տ. ԱՐՏԱԽՈՉԴ ԱՐՔԵՊՈ. ԱԹՈՐՄԵԼԱՆԻ
ԱՅՑԸ

31 Մարտի ԴՀ. օրը Գեր. Տ. Արտախոչդ Արքակուսպոս Սիւրմէեան կը ժամանէ Ա. Աթոռ, եղբայրական զգացումներով այցելութիւն մը տուած ըլլալուն առիթով նորին Ամենապատուաթիւն Ա. Պատրիարքը Հօր, ի Շինէլէ, Կրեթէ առողջ ու գաւազանի օգնութեամբ քալելու կարող վիճակի մէջ կը գտնէ Նորին Ամենապատուաթիւնը Երկու օր հիւր կը միայ ի Ա. Աթոռ, այցելով Մատենադարանը, Ա. Թարգմանչաց Վարժարանը, և մասնաւորաբար ֆառանգաւորաց Վարժարանը և Ընծայաբանը, ուր խօսեցաւ առանձնաբար ժառանգաւոր Սաներուն և Սարկաւագներուն, խրախուսելով զանոնիք իր տուոյ ու բաշտիրիչ խօսքերով, զարգանալու, անելու և պատրաստուած, անձնուէր պաշտօնեաները Ալլալու Ա. Աթոռոյ և ամբողջ Աղքին:

1 Ապրիլ, Հինգամբթի զիյեր, Հակոբին քարոզեց նիւթ ունենալով Եփս. Դ. Դիունին վերջին հատուածը: Բնութենէն, կինդանական աշխարհէն առնուած շինիչ պատկերներով և օրինակներով ցոյց տուաւ թէ մարդուն զերագնյ նպատակը պէտք է ըլլայ մերկացնել իր մէջէն Հին Մարզը, անոր տեղ ծաղկեցնելու համար նոր Մարզը՝ գեղեցկութեան, ազնուութեան անուշ կերպաւորումներով:

2 Ապրիլ Օւրբաթ առաւտուն նորին Սրբանութիւնը մեկնեցաւ իր պաշտօնատեղին, իր հետապնդութ Միաբանութեան համարական զդացումները:

Տ Օ Ւ Ա Կ Ա Ն Ք Ե Խ Ե Մ Ա Կ Ա Ն Ք

* 7 Փետր. Կիր. — Ա. Պատարազը մատուցուեցաւ ի Ա. Յարութիւն, քարոզեց Տ. Հայկազուն Վ. Վ. սա բնաբանով. «Ծրպէս բարձրացոյց Մովսէս զօնն յանապատի, նոյնպէս բարձրանալ պարտ է Որդոյ Մարզոյ»: Ենչսաց անհրաժեշտութիւնը մարզոց նայուած քններուն սկսումին զէպի բարձունքները սրբութեան ուրկէ կակնկալուին բամենայն պարզեց կասարեալք», Մարզկութիւնը իր մարմնաւոր աշքերով պիտի չկարենայ վայելել զնասուած եթէ չի զիտէր վեր բարձրանալ աշխարհի մտահոգութիւններէն».

* 14 Փետր. Կիր. — Ա. Պատարազը մատուցուեցաւ ի Ա. Յակոբ. քարոզեց Տ. Կիրեղ Մ. Վ. Վ. սա եմ մի՛ երկնչիք» բնաբանով: Ցոյց տուաւ թէ Ցիսուս իբրև աստուածային, հզու-

կան արժէքներու մարմնացումը, չի մոռնար այն հոգիները, որոնք տեղ կը բանան իրենց սրտին մէջ՝ Անոր:

* 21 Փետր. Կիր. — Ա. Պատարազը մատուցուեցաւ ի Ա. Յարութիւն, քարոզեց Տ. Կիրեղ Մ. Վ. Վ. Վ. «Երթայր գործեցէք, մի՛ զկրոսաւականն...» բնաբանութ նոր կայացացնելէ յետոյ հրեայ ամբոխին մտահութիւնը Յիուուսի հետէն երթաւու անոնց եաւանդնելու մէջ, անկէ հրաշագործութիւններ տեսնելու համար, ցոյց տուաւ թէ նաւատին է պայման Յիուուսի հետէն երթաւու, անով միայն մարդկի պիտի կարենան Աստուածոյ գործը գործել իրենց անհատական և ընկերային կեանքին մէջ:

* 27 Փետր. Նր. — Տեառնընդառաջ, երէկ, երեկոյեան՝ նախատօնակը, այսօր զիշերային և առաւտօն մամերգութիւնները պաշտուեցան ի Ա. Յակոբ, պատշաճ հանդիսաւորութիւնամբ: Ա. Պատարազը մատոյց եպիսկոպոսական խոյրով Գեր. Տ. Կիրեղ Մ. Վ. Վ. Վ. սոր և քարոզեց բացայաբերման տօնին, նկարացելէ յետոյ հրեայ անդամները սովորութիւնները տաճարի մէջ այս տօնին առիթով կատարուող, դասեր հանեց մաքրութեան, նուիրումի և զննութեան:

* 28 Փետրվ Կիր. — ի Ա. Հերշտակապետ մատուցուեցաւ Ա. Պատարազը, ուր քարոզեց Գեր. Տ. Կիրեղ Մ. Վ. Վ. Վ. յորովայնէ նորա բիսեցեն» բնաբանով. ցոյց տուաւ թէ երրայեցւոց անապատի կեանքին մէջ, հաւատուքն է սոր կենսատոյց պահեց անոնց գոյութիւնը, ապրեցնելով մինչեւ իսկ զիշեական գոյութիւնը ժողովուրդին: Հաւատքը ոգին է մարմինին մէջ, ու ժողովուրդները իրենց ոգիին զօրութեամբն է սոր կ'ապրին ժամանակներու մէջէն:

* 4 Մարտ ԵՀ. — Վարդանանց, երէկ՝ նախատօնակը, այսօր արարողութիւններն ու Ա. Պատարազը պաշտուեցաւ բացայաբանի հանդիսաւորութեամբ: Վարդանանցը տօնն է Ժառանգաւոր Սաներուն, որոնք իրենց մէջնեն ընտրուած զասապետներով փառակը ընդացեցին խորհուրդը տօնին, իրենց աշխոյժ երդեցութեամբ: Ա. Պատարազը մատոյց ժառանգաւոր Վարժարանի և Ընծայաբանի Հոգնորհ Տեսուչ Տ. Եղիշէ Վ. Վ. Տէրտիկը եան, որ և քարոզեց Աւարայրի խորհուրդի ներշնչութիւններէն, զիտել տալով թէ Աւարայրը արիւնի զատչ մը չէ, Աւարայրի առզմիները բանակի մարդեր չեն, այլ սուրբեր և հերոսներ: Պարզանը կը զորձէ մարդկորէն, բայց կը տեսնէ մարդարկութիւններն Պէտքը զգալի է հայ իրականութեան մէջ մեծ մարդերու, ու չունինք: Զունինք նաև պատմութիւն, քանի որ ժողովուրդի մը պատմութիւնը իր մեծ մարդերու կեանքին շղթան է:

* 7 Մարտ Կիր. — Բուն բարեկենդան. երէկ երեկոյեան՝ կիրակմայից ժամերգութեան ընթացքին ծածկուեցան բուլու խորանները և աէրու-

նական ու սըբոց նկարները Ա. Աթոռոյ Մայր - Տաճարին մէջ։ Այսօր ի Ս. Ցակոր մատուցուեցաւ «Փակեալ խորան»ի առաջին Ա. Պատարազը, մաւոքը ընելով այսպէս Մեծ - Պահաց խորհրդաւոր ու տապաւորիչ օրերուն։

* 9 Մարտ Գշ. — Հնկումներու շարքին առաջին քարոզը տուաւ Տ. Կիւրեղ Ծ. Վրդ.՝ բոյց տալով պահաց մասնաւորաբար Մեծ - Պահաց օրերուն նշանակութիւնը, Փիզիքական և առողջապահական տեսակէտով, մարզոց կեանքին մէջ, չեշտերով նոյն ատեն անոր քարոյական կարիսրութիւնը իրեւ զանուութիւն, պատրաստութիւն, ապաշխարանք, մաքրութեամբ և արժանաւորապէս զիմաւորելու մեր Տիրոջ փառքը որ մեր ալ հոգիներուն յարութեան նույիրագործումն է։

* 11 Մարտ Եշ. — Հնկումին քարոզեց Տ. Հայկազուն Վրդ.՝ վերլուծելով զաղափաւները՝ հնայիաց սիրով Հայրդ զթած երգին մէջը արտայատուած։ Հարիքները իրողութիւններ են կեանքի մէջ, և մարզը միշտ ենթակայ՝ անոնց յարձակումներուն, որոնց յաղթելու համար պէտք ունի սակայն Աստուծոյ զթութեան։

* 14 Մարտ Բ. Կիրակի Մեծ - Պահաց, Արտասաման. — Երեկի, ի Ս. Յարութիւն կատարուեցաւ հանդիսաւոր մուտքը՝ Հրաշափառութիւն, զիսաւորութեամբ Լուսարարապետ Գիր. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. ի ապա՝ Երեկոյեան ժամերգութիւնն ու նախատեակը։ Այսօր՝ Գիշերային և Առաւտեան ժամերգութիւններէն և Ա. Պատարազի մատուցումէն յետոյ՝ մեղագասկան Երկրորդ Դոկտորթայի կերնատան մէջ, ամբողջ Միարանութեան մասնակցութեամբ և Հազ. Տ. Գէորգ Վարդապետի դիմաւորութեամբ, մեծահանգստ թափօր կազմուեցաւ՝ Պատանատեղի մասին մէջ։

* 16 Մարտ Գշ. — Հնկումին քարոզեց Տէր Հմայեակ Վրդ.՝ ԱՌ Տէր Գրկեա զմեզ, զի կորնչիմք բնաբանով՝ Ներկայացնելէ յետոյ գրուազը այլքներու փոթուրիկին ենթարկուող Յիսուսի աշակերտներու տազնապին, որ իրենց մէջ արթնցած էր կեանքին, բնութեան ուժերուն սարափէն ցոյց տուաւ թէ այս բացականչութիւնը ձայնն է ինքինին քաղաքացին մէջ զգացող հոգիին։ Անոնք միայն պիտի փրկուին որոնք իրենց ապաւէն Կ'ընտրեն հրաշալի Վարդապետու։

* 21 Մարտ Գ. Կիրակի, Անոռակին. — Ուուրբ Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ, քարոզեց Տ. Գէորգ Վրդ.՝ Անըրամութիւն եղիցի ի վերայ միոյ մեղաւորի բնաբանով։ Ցոյց տուաւ թէ այսօր անառակ մարզկութեան պատկերն է որ կը յիշեցնէ մեղի եկեղեցին, որպէսզի անըրազառնանք մենք մեր սիսալներուն, տոկալու աշխարհէն եկող տառապանքներուն։ Ու եկեղեցին հետ երկնքի հրեշտակներն ալ ուրախութեան մէջ Կ'ըլամն ի տես ապաշխարող մարդկութեան։

* 28 Մարտ Գ. Կիրակի, Տնտեսին. — Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ Ս. Գիւազը ի մատրան մէջ, անձրեսու և աննպաստ եղանակին պատճառաւ ուրիշ Կիրակիի մը յետաձգուած ըլլարով Զիթենեաց Երեան վրայ կատարուելիք պաշտամունքը։ Քարոզեց Տ. Հայկազուն Վրդ.

անիրաւ Տնտեսի մասին, վեր առնելով առակին իմաստը, նմանցուց մարզկութիւնը իրեւ արնամեսներ Աստուծոյ կողմէ դրուած այս աշխարհի վրայ, սրոնք իմաստութիւնը պիտի ունենան ոգտագործել իրենց ապրած կեանքը, իրենց հոգիին փրկութեանը համար։

* 30 Մարտ Գշ. — Հնկումին քարոզեց Տէր Պարզի Վրդ.՝ Աւ ետու նոցա ժամանակ ապաշխարհը բնաբանով։ Ցոյց տուաւ թէ մարդը ազատ չէ կիրքերէ, մեղքերէ, սակայն Աստուծոծ պատեհութիւն կուտայ մարզկութեան ազատել ինքինքը անոնց կապանքներէն, որոնին մարզը հոգեցէն իրականութեան մը վայելումին համար է ստեղծուած։

* 4 Ապրիլ Ե. Կիրակի, Պատառքին. — Մասնակցութեամբ ամբողջ Միարանութեան և աշակերտութեան, և զիսաւորութեամբ Լուսարարուապետ Գիր. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. ի Հայտափառութիւնը յետոյ ի Ս. Յարութիւն, երեկ' նախատօնակը, այսօր՝ Գիշերային և Առաւտեան ժամերգութիւնները և Ս. Պատարազը պաշտուեցան Ս. Յարութեան Տաճարի կիր ազգապատկան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցիին մէջ։ Ս. Պատարազի աւարտութիւն Միարանութիւն և աշակերտութիւն, շուրջառազգեստ, լուցեալ մամելդնեներ ի ձեռին, երգեցողութեամբ վեր կ'ելլին, երեւք անգամ թափօր դառնալով Պատանատեղի բաժինին մէջ։

* 6 Ապրիլ Գշ. — Հնկումին քարոզեց Տ. Սիրովը Վրդ.՝ բացատրելով բարոյական ուսուցումը Յիսուսի, որ ամենէն չքեզ ձեռով կը յայտնուի Երեան քարոզի տերանիշներու հատուածին մէջ։ Քիստոս միայն ժխտական պատուիրաններ չէ որ կը բրէտէ, ինչպէս պարագան է հին կրօններու, այլ աւելի զգուած՝ զրական երեսով մը կը ներկայանայ.՝ լինել, զործել. չարիքը արմատախիլ ընել մարդոց մէջէն։

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Ա Ն Ք

* 23 Փետր. Գշ. — Պատրիարքաբար այցելեց Հրեայ Վսեմ. Խախամապետը իր հետեւրդներով միասին. ընկունուեցան պատրիարքաբարանի մէջ Գիր. Տ. Գէորգ Վրդ. ի կողմէ։

* 15 Մարտ Բշ. — Իրանի Մայր Կայսրուհին և իր զուսարը իշխանուհի Շամս, նգիստոսոսի մայր թագուհին և իր զուսարը իշխանուհի Ֆայիլէ իրենց հետեւրդներով Ս. Յարութիւն այցելեցին Ս. Աթոռոյ Գիր. Լուսարարապետին առաջնորդութեամբ։

* 21 Մարտ Կիր. — Երուսալէմի նահանգային Կառավարիչ Վսեմ. Քիմրօչ Հանդստեանու առաջ Յիսուսի Պատառքի Վսեմ. Քիմրօչ Հանդստեանու առաջ Յիսուսի Առաջնորդ Հանդստեան Սոր. Յաջորդ օրը այցելեց նաև Պատրիարքաբարանը։

* 25 Մարտ Եշ. — Ի զիմաց Ամեն. Ս. Պատրիարք Հօր, Պախանորդ Գիր. Տ. Գէորգ Վրդ. հետու ունենալով առաջնորդ Ա. Թարգման Հոգ. Տ. Գրիգոր Արեգայ, Երեկայ զանուեցաւ Քինկ Տէյլիստ Հօթել կ պատիւ Վսեմ. Քիմրօչի տրուած թէյտանդանին։